ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N **Վ**/170-2025

ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

28 նոյեմբեր 2025 թվական

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ ԷՐ՝ Վարչապետ (խորհրդի նախագահ)	Ն. Փաշինյան
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ (Խորհրդի անդամներ)՝	
Բարձրագույն դատական խորհրդի նախագահ	Ա. Աթաբեկյան
Վարչապետի աշխատակազմի ղեկավար	Ա. Հարությունյան
Արդարադատության նախարար	Ս. Գալյան
Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար	Ա. Հովհաննիսյան
Վճռաբեկ դատարանի նախագահ	Լ. Թադևոսյան
Գլխավոր դատախազ	Ա. Վարդապետյան
Քննչական կոմիտեի նախագահ	Ա. Պողոսյան
Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ	Ա. Նահապետյան
Մարդու իրավունքների պաշտպան	Ա. Մանասյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող	Մ. Գալստյան
Պետական վերահսկողական ծառայության ղեկավարի պարտականությունները կատարող	Ռ. Բազիկյան
Խորհրդի անդամ հասարակական կազմակերպություններ՝	
«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Ա. Ղազարյան
«Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության ընտրական ծրագրերի ղեկավար	Մ. Հովեյան

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար	Ա. Սաքունց
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ	Կ. Զադոյան
«Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող	Դ. Իոաննիսյան
«Հայաստանի գործատուների հանրապետական միություն» հասարակական կազմակերպության նախագահ	Վ. Համբարձումյան
Խորհրդի հրավիրյալ մասնակիցներ՝	
Ներքին գործերի նախարար	Ա. Սարգսյան
ԱԺ պատգամավոր, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն	Ա. Ջուլհակյան
Վարչական դատարանի նախագահ	Կ. Զարիկյան
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամ	Ա. Փաշինյան
Արդարադատության նախարարի տեղակալ	Տ. Դադունց
Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ	Ե. Կարապետյան

ՕՐԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Նիստը բացեց՝ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) նախագահը՝ առաջարկելով սկսել հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի նիստի օրակարգի քննարկումը:

2. Մինչև օրակարգային հարցերին անդրադառնալը «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը հարց բարձրացրեց նախորդ նիստից բաց մնացած՝ քրեական վարույթների կարճման որոշումները հրապարակային դարձնելու մասին:

3. Արդարադատության նախարար Ս. Գալյանը ներկայացրեց խնդրի էությունը՝ նշելով, որ ներկայումս քրեական վարույթների կարճման որոշումները տրամադրվում են միայն դատավարության մասնակիցներին:

4. Խորհրդի նախագահը առաջարկեց այս հարցի վերջնական լուծման առնչությամբ շարժվել միջազգային փորձի ուսումնասիրմամբ և տեղայնացմամբ:

Օրակարգային հարց 1

Կուսակցությունների ֆինանսավորման, **այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկության օրենսդրական և գործնական խնդիրների քննարկում**

5. Զեկույցով հանդես եկավ Արդարադատության նախարար Ս. Գալյանը.

ներկայացվեց կուսակցությունների ֆինանսավորման, այդ թվում՝ նախընտրական քարոզարշավի ֆինանսավորման թափանցիկության օրենսդրական և գործնական խնդիրները՝ նշելով այդ ուղղությամբ կատարվող աշխատանքները և Արդարադատության նախարարության կողմից առաջարկվող լուծումները:

Օրակարգային հարց 2

Եվրոպայի խորհրդի Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի՝ (GRECO) **Հայաստանի գնահատման** 5-**րդ փուլի շրջանակներում առկա հանձնառությունների կիրարկման ուղղությամբ տարվող աշխատանքների**, **ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության** (OECD) **գնահատման** 5-**րդ փուլի շրջանակներում առաջընթացի զեկույցի արդյունքների քննարկում**:

Զեկույցով հանդես եկավ Արդարադատության նախարար Ս. Գալյանը.

ներկայացվեց Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏԶՀԿ) գնահատման 5-րդ փուլի շրջանակներում առաջընթացի զեկույցի արդյունքները, գրանցված առաջընթացը: Անդրադարձ կատարվեց առկա խնդիրներին և այդ ուղղությամբ կատարված և նախատեսվելիք աշխատանքներին:

Զեկույցով անդրադարձ կատարվեց նաև ԳՐԵԿՈ-ի 5-րդ փուլի Հայաստանի գնահատման զեկույցի շրջանակներում առկա և կատարման ենթակա 22 հանձնարարականներին: Ներկայացվեց հանձնարարականների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների վերաբերյալ տեղեկատվությունը:

7. Ներկայացվեցին հետևյալ էական դիտարկումները՝

1) Խորհրդի նախագահը, անդրադառնալով զեկույցով ներկայացված օրակարգային 2-րդ հարցին, հարց բարձրացրեց միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ-ին և այդ կազմակերպություններին անդամակցող այլ երկներին տրված հանձնարարկանների համեմատական վերլուծության և վերաբերելի միջազգային փորձի ուսումնասիրության, ինչպես նաև ՀՀ կողմից կատարման ոչ ենթակա հանձնարարականների առկայության վերաբերյալ:

2) Արդարադատության նախարար Ս. Գալյանը անդրադարձ կատարեց առկա միջազգային փորձին՝ օրինակ բերելով որոշ հանձնառությունների շրջանակներում իրականացված ուսումնասիրությունները: Կարևորվեց ՀՀ պետական մարմինների կողմից մինչև համապատասխան հանձնարարականների ստանձնումը՝ վերջիններիս ՀՀ օրենսդրության համապատասխանությունը միջազգային գործընկերների հետ քննարկելու անհրաժեշտությունը: Որպես խնդրահարույց միջազգային հանձնառության օրինակ նշվեց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների եզրափակիչ մասի հրապարակայնությունը:

3) Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ա. Ջուլիակյանը առաջարկեց հրապարակային դարձնել բարեվարքության եզրակացությունը ամբողջությամբ: Միաժամանակ, անդրադառնալով ոլորտային միջազգային պարտավորությունների կատարվածության աստիճանին, նշեց որ ՀՀ-ն ունի բավականին առաջատար դիրքեր, այդ թվում՝ համեմատած ԵՄ անդամ որոշ երկրների հետ:

4) «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախագահ Կ. Զադոյանը անդրադարձ կատարեց միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող գնահատումների մեթոդաբանական որոշ խնդիրների՝ բերելով օրինակներ և կարևորելով գնահատման ժամանակ հնարավոր մեթոդաբանական սխալներին ուշադրություն դարձնելու անհրաժեշտությունը:

5) Վերոնշյալի համատեքստում Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ա. Աթաբեկյանը ներկայացրեց ԳՐԵԿՈ-ի հանձնարարականներից մեկի կատարման առնչությամբ առաջացած խոչընդոտների, այդ թվում՝ հանձնարարականի շրջանակներում Սահմանադրական կարգավորումների հնարավոր փոփոխությունների անհրաժեշտության մասին:

6) Մարդու իրավունքների պաշտպան Ա. Մանասյանն անդրադարձ կատարեց միջազգային զեկույցներով առկա՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ազդարարների պաշտպանության լիազորությունների շրջանակներում առկա խնդիրներին, կարևորեց հանձնարարականների պատշաճ կատարման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությանը:

7) «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության ղեկավար Ա. Սաքունցը օրակարգային 1-ին հարցի շրջանակներում անդրադարձ կատարեց քաղաքական շարժման նախաձեռնությունների ֆինանսական միջոցների թափանցիկության, մինչ նախընտրական քարոզության մեկնարկը, քարոզչական բնույթ կրող գործողությունների և դրանց մասով արված ծախսերի թափանցիկության վերաբերյալ հարցերին՝ բարձրացնելով նաև դրանց պատշաճ վերահսկողությանն վերաբերյալ խնդիրները: Միաժամանակ, առաջարկեց նախընտրական քարոզչության օրինականության նկատմամբ պատշաճ վերահսկողության շրջանակներում ապահովել համապատասխան

պետական մարմինների համագործակցությունը՝ տեղեկատվության փոխանակման և խախտումները բացահայտելու նպատակով:

8) «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող Դ. Իոաննիսյանը հարց բարձրացրեց որպես կուսակցություն չգրանցված, սակայն քաղաքական գործունեություն իրականացնողների մասին: Առաջարկեց սեղմ ժամկետներում իրականացնել համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ համապատասխան բացերը վերացնելու նպատակով: Միաժամանակ, նշեց որ առկա խնդիրների որոշակի լուծումներ են առկա 2021 թվականին Վենետիկի հանձնաժողով ներկայացված նախագծերի փաթեթում:

9) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Մ. Գալստյանն անդրադառնալով բարձրացված հարցերին, նշեց, որ ներկայիս օրենսդրական կարգավորումները ապահովում են միայն կուսակցությունների կողմից իրականացվող գործունեության վերահսկողությունը, սակայն կուսակցության կարգավիճակ չունեցող, սակայն քաղաքական գործունեություն ծավալող այլ միավորումները դուրս են մնում վերահսկողության շրջանակներից և օրենսդրությունը համապատասխան կարգավորումներ չի պարունակում:

10) «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության նախագահ Ա. Ղազարյանն անդրադարձավ կուսակցությունների նվիրատվության կառուցակարգերին:

11) «Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության ընտրական ծրագրերի ղեկավար Մ. Հովեյանը ներկայացրեց գործնականում նախընտրական քարոզչության ֆինանսավորման թափանցիկության առաջացող խնդիրներին: Անդրադարձավ օրենսդրական փոփոխությունների իրականացման ժամկետներին:

12) Վարչապետի աշխատակազմի ղեկավար Ա. Հարությունյանն առաջարկեց 2026 թվականի ընթացքում հնարավորինս խուսափել օրենսդրական փոփոխությունների իրականացումից, անհրաժեշտության դեպքում փոփոխություններն իրականացնելով մինչև 2025 թվականի ավարտ:

13) Խորհրդի նախագահը հանդես գալով եզրափակիչ ելույթով՝ առաջարկեց.

1) դիտարկել Խորհրդի հաջորդ նիստը 2025 թվականի դեկտեմբերի 2-րդ կեսին անցկացնելու հնարավորությունը,

2) բարձրացված խնդիրների վերաբերյալ լուծումներ գտնելու նպատակով բոլոր շահագրգիռ մարմինների ներգրավմամբ իրականացնել քննարկումներ և գտնել համապատասխան լուծումներ,

3) ուշադրություն դարձնել առկա սեղմ ժամկետներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ

23.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ